

Տեխնիկական առաջադրանք

Նորարարական ջերմոցների կառավարման գործնական հմտությունների և պրակտիկ գիտելիքների տրամադրում

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Նախագծի համար. 54368-001

Նախագծի անվանում. TA-6594 REG: Covid-19-ի հետևանքների հաղթահարում համայնքահեն միջամտություններով, ղեկավար ԲՀԿ Հայաստանում՝ Արմավիրի Չարգացման Կենտրոն (54368-001)

Ֆինանսավորում. Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղ օվկիանոս ճապոնիայի հիմնադրամ (JFPR)

Առաջադրանքի անվանումը: Նորարարական ջերմոցների կառավարման գործնական հմտությունների և պրակտիկ գիտելիքների տրամադրում

Տևողությունը. դեկտեմբեր 2022 - մարտ 2023 (4 ամիս)

Անցկացման վայրը. ՀՀ Արմավիրի, Շիրակի, Լոռու, Արարատի և Գեղարքունիքի մարզեր և ավելի լայն լսարան առցանց ներգրավմամբ

Հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը. դեկտեմբերի 04, 2022

Դիմելու ընթացակարգը. հայտադիմումները (հայերեն կամ անգլերեն լեզուներով, մինչև 4 էջ) և մանրամասն գնային առաջարկը պետք է ուղարկել partner@kiraki.org էլեկտրոնային հասցեին:

2. ԽՆԴԻՐՆԵՐ, ՆՊԱՏԱԿ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1. Ծրագրի ընդհանուր նպատակը

ԱԶԲ ԽՕԾՀ Տեխնիկական Աջակցությունը (SU) Covid-19-ի հետևանքների հաղթահարում համայնքահեն միջամտություններով ծրագրի շրջանակներում աջակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ԲԿՀ)՝ մատուցելու ծառայություններ, որոնք կմեղմացնեն Covid-19-ի ազդեցությունը խոցելի խմբերի վրա: Կոնսորցիումը՝ Արմավիրի Չարգացման կենտրոնը (ԱԶԿ) (ղեկավար ԲՀԿ), Կիրակի զարգացման հիմնադրամի (Կիրակի) և Առողջապահական քաղաքականության և Նորարարության կենտրոնի ՀԿ-ի (ԱՔԿ) հետ, տեխնիկական առաջադրանքի (SU) շրջանակներում կիրականացի ծրագիր, որը համապատասխանում է SU-ի երեք խնդիրներին/արդյունքներին:

Խնդիր 1 – Չարգացնել ճգնաժամերի կանխարգելման, հաղթահարման և ադապտացիայի համայնքահեն կարողությունները:

Խնդիր 2 – Աջակցել Covid-19 ազդեցությամբ ճնշված սոցիալական պաշտպանության ոչ ֆորմալ ծրագրերին:

Խնդիր 3 – Տրամադրել տնտեսական աջակցություն այն մարդկանց, ովքեր կենսապայմանները վատթարացել են Covid-19 համաճարակի հետևանքով:

2.2. Սույն առաջադրանքի նպատակը

Կիրակի Չարգացման Հիմնադրամը փնտրում է անհատ փորձագետներ կամ կազմակերպություններ (այսուհետ՝ Խորհրդատու) ինտեսիվ ջերմոցներում տեխնոլոգիական նորարարության վերաբերյալ եռօրյա դասընթաց նախագծելու և

անցկացնելու նպատակով: Դասընթացների նպատակն է այգեգործների նոր սերնդի կարողությունների զարգացումը՝ փոքր ֆերմերային գործունեությունից անցում կատարելու մեծածավալ գործունեության: Վերապատրաստումը ենթադրում է առցանց և առկա ձևաչափերի համադրությամբ դասընթաց չորս-սեզոնային գյուղատնտեսության վերաբերյալ ապագա անհատ ձեռնարկատերերի և գործատուների համար՝ կենտրոնանալով էկոլոգիապես մաքուր ջերմոցային պարակտիկաների վրա: Վերապատրաստումը ներառելու է երկօրյա տեսական դասընթաց հիդրոպոնիկ ջերմոցների ինչպես նաև այլ նոր ջերմոցային մոդելների նախագծման և գործունեության վերաբերյալ և մեկ օրյա ուսումնական այց ջերմոց:

Առաջադրանքի ընդհանուր նպատակն է կարողությունների զարգացման մոդուլի միջոցով բարելավել Քովիդ-19-ի և վերջին 3 տարիների այլ արտակարգ իրավիճակների ազդեցությունը կրող խոցելի խմբերի կոշտ հմտությունները, նպաստել նրանց աշխատունակության և աշխատաշուկային հասանելիության բարձրացմանը:

Դասընթացը առաջնահերթ թիրախավորում է Հայաստանի մարզերի խոցելի և ճգնաժամային ազդեցությունը կրող խմբերին: Վերջիններս կզարգացնեն ջերմոցների նախագծման, կառուցման և ջերմոցային գործունեության հմտությունները:

Առնվազն 40 մասնակից կներգրավվի դասընթացում:

2.3. Ակնկալվող արդյունքներ

Դասընթացի արդյունքում թիրախավորված մարզերի առնվազն 40 մասնակիցներ (առնվազն 50%-ը իգական սեռի ներկայացուցիչներ) կբարելավեն ջերմոցային գործունեության իրենց հմտությունները: Դասընթացը կապված է ծրագրի միջոցով բացահատված մասնագիտությունների հետ, որոնք ներառում են գյուղատնտեսությունը, հյուրընկալությունը և ձեռնարկատիրությունը: Վերապատրաստման մաս հանդիսացող ուսումնական այցերը կօգնեն մասնակիցներին հասկանալ տեսական գիտելիքների ներբույսությունները և տեխնիկական կողմը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ

3.1. Առաջադրանքի նկարագրությունը

Կազմակերպել առնվազն 40 շահառուների վերապատրաստումը նորարարական ջերմոցների վերաբերյալ առցանց և առկա ձևաչափերով դասընթացի միջոցով:

Առաջադրանքը իրականացվելու է հետևյալ փուլերով.

Փուլ 1. Մասնակիցների հավաքագրում թիրախավորված մարզերում՝ ԿԳՄՆ ինչպես նաև տեղական ՄԿՈԻ հաստատությունների ներգրավմամբ:

Փուլ 2. Եռօրյա ծրագրի պատրաստում, որը կներառի առնվազն երկօրյա մոդուլ հիդրոպոնիկ ջերմոցների կառավարման վերաբերյալ և մեկօրյա պրակտիկ այց ջերմոց:

Փուլ 3. Դասընթացի անցկացում առնվազն 2 անգամ նվազագույնը 40 մասնակիցներ ներգրավելու նպատակով: Դասընթացն անցկացվելու է հայերեն լեզվով, պարզ և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ:

Փուլ 4. Առցանց/հեռահար աշխատանքի վերաբերյալ Էլեկտրոնային դասընթացի տեսաձայնագրում:

Փուլ 5. Հաշվետվություն և արդյունքների ամփոփում:

Ծրագրի հրապարակայնությունը և թիրախավորված խմբերից դուրս արդյունավետ տարածումը ապահելու նպատակով դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը տարածվելու է հանրային հարթակներում, ինչպիսիք են պաշտոնական կայքերը և սոցիալական մեդիան, տեղեկատվական նյութերի և թռուցիկների տարածումը տեղական ՄԿՈԻ հաստատությունների, պետական և տեղական կառավարման մարմինների և այլն շահագրգիռ կողմերի միջոցով:

Նշում. Դասընթացի բոլոր փուլերը պետք է սերտորեն համաձայնեցվեն Ծրագրի համակարգողի հետ՝ նշանակված Ծրագրի կողմից:

Պայմանավորված Քովիդ-19 համավարակով, հանրային/խմբային միջոցառումների վերաբերյալ հնարավոր սահմանափակումներով և սոցիալական հեռավորության պահպանման պահանջներով՝ դասընթացները կարող են անցկացվել առցանց տարբերակով:

3.2. Նախատեսվող արդյունքների շրջանակը

Հիմնական արդյունքները ներառում են.

- Հայտադիմում և հարցազրույցի ուղեցույց մասնակիցների ընտրության համար
- Դասընթացի մոդուլ
- Դասընթացի մասնակիցների ցանկ և տեղեկատվություն
- Մասնակիցների տեղեկամատյանները
- Ընթացիկ հաշվետվություններ
- Դասընթացների լուսանկարներ և վիդեոներ
- Դասընթացի հավաստագրերի պատճեններ
- Մասնակիցների կողմից դասընթացի գնահատման թերթիկներ

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅԱՆՁՆԵՐ

Խորհրդատու և ներկայացնելու է հետևյալ հաշվետվությունները անգլերեն լեզվով.

- Վերջնական հաշվետվություն. դասընթացների իրականացման նակարագրություն՝ ներառյալ նախնական ընտրությունը, մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, դասընթացի ընթացքի ներկայացում: Հաշվետվությունները պետք է ներառեն բոլոր նախատեսվող արդյունքները՝ որպես հավելվածներ, ինչպիսիք են օրինակ վերապատրաստման մոդուլները, ստորագրված թերթիկները, գնահատման արդյունքները և այլն: Պետք է ներկայացնել վերապատրաստումի ավարտից առնվազն 10 օր հետո:

7. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Վճարումները կկատարվեն երկու փուլով (նախնական և վերջնական վճարումներ) նախատեսվող արդյունքների ներկայացման պայմաններում (վերապատրաստման

ծրագիր և վերջնական հաշվետվություն) : Կճարումները կատարվելու են ՀՀ դրամով
Խորհրդատուի բանկային հաշվեհամարին: